

ՀԵՏԱԶՈՏՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ ԹԵՄԱՅՈՎ (ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ)

Խորհրդատու- տ.գ.թ. Ա. Սաֆարյան

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության նպատակները

- Վերլուծել Հայաստանի արդյունաբերական ենթաճյուղերի առանձնահատկությունները ըստ գերակայության, հումքի և էներգետիկ ռեսուրսների կախվածության տեսանկյունից:
- որոշարկել ենթաճյուղերի գործատուների պահանջները մասնագիտական հմտությունների հանդեպ, ինչպես նաև արտահանման ուղղվածության դեպքում առանձնահատուկ հմտությունների վերաբերյալ:
- գնահատել շրջանաձև տնտեսության մոդելի կիրառման և թվայնացման վերաբերյալ ընթացող գործընթացները և զարգացման հնարավորությունները:
- կիրառել SWOT մեթոդաբանություն և խորացված հարցազրույցներ արդյունաբերության զարգացման ռազմավարությանը առնչվող պետական համապատասխան փաստաթղթերի հասցեականության գնահատման և ուժեղ կողմերի ու հնարավորությունների գնահատման տեսանկյունից:
- ներկայացնել լուծումներ այդ պետական փաստաթղթերի բարելավման և ՀՀ արդյունաբերության զարգացման պետական աջակցության գործիքակազմի համատեքստում:
- ներկայացնել արդյունաբերության զարգացման վերաբերյալ համապարփակ դիրքորոշում: Արտահայտել հայտնաբերված արդյունքների և ներկայացված դիրքորոշման կապը CEPA համաձայնագրի համապատասխան հոդվածների պահանջների հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԿՀ- ավտոմատ կառավարման համակարգեր

ԱԲ- արհեստական բանականություն

ԿՀ- կառավարվող համակարգեր

ԱԱ –ազգային ակադեմիա

ԳԿ- գիտության կոմիտե

ԲՏԱՆ – բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն

Տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական առաջադրանքը բխում է հետազոտության նպատակներից:

1. Հայաստանի արդյունաբերական զարգացման պոտենցիալի գնահատումը ըստ ենթաճյուղերի, դրանց զարգացման հնարավորությունները և ուժեղ կողմերը: Ուժեղ կողմերով պայմանավորված նկարագրել արտահանման հնարավորությունները, միջազգային շուկաներ մուտք գործելու համար արտադրանքի և ընկերությունների սերտիֆիկացման մարտահրավերները:
2. Շրջանաձև տնտեսության մոդելին և թվայնացմանը անցնելու ներկա գործընթացների և հնարավորությունների գնահատումը:
3. Պետական տարբեր հայեցակարգերի և ռազմավարությունների վերաբերյալ ընդհանուր գնահատականը արդյունաբերության զարգացման ռազմավարության համատեքստում և CEPA վերոնշյալ գլուխների և հոդվածների նկատմամբ:
4. Հետազոտությունը պետք է իրականացնել տարբեր պետական փաստաթղթերի վերլուծության, 15 խորացված հարցազրույցներ ոլորտի մասնագետների, պաշտոնյաների և այդ ոլորտում ուսումնասիրություններ կատարած այլ կազմակերպությունների հետ, ներառյալ գործարար և ոլորտային ասոցիացիաներ, գործատուների միություններ և առևտրաարդյունաբերական պալատներ, ինչպես նաև խորացված հարցազրույցներ 50 գործատուների հետ, ընտրված արդյունաբերության տարբեր ենթաճյուղերից:

1. ՆԱԽԱԲԱՆ

Պաշտոնական տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրությունը ու վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանում բացակայում է արդյունաբերության զարգացման միասնական ինտեգրված հայեցակարգ և զարգացման ռազմավարություն: Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել, թե ՀՀ Կառավարությունը ԵՄ-Հայաստան Համապարփակ գործընկերային համաձայնագրի հավելվածում նշված դրույթների պահանջների կատարման շրջանակում, որտեղ է կատարել բացթողումներ և խորհրդատուի առջև ծառայել է խնդիր ձևակերպել արդյունաբերության զարգացման հիմնարար ուղղությունները, որոնք կարող են ներառվել ապագա հայեցակարգում առաջիկա 3-5 տարիների համար, ինչպես նաև ձևակերպել դրա կառուցվածքը (հիմնական կմաղքը): Ըստ բացահայտված խնդիրների և իրականացված խորացված հարցազրույցների, հետազոտական աշխատանքը հանգել է հետևյալ հետևությունների ապագա հայեցակարգի վերաբերյալ:

Հայեցակարգը պետք է ներառի.

- Կայուն ու էֆեկտիվ աշխատանքի հնարավորություն,
- Նպաստի հարակից ճուղերի զարգացմանը, հորիզոնական և ուղղահայաց կապերին,

- Նպաստել ինտեգրման ու կոոպերացիայի ընդլայնմանը միջազգային համագործակցության համակարգերի հետ, հաշվի առնելով պետության պայմանագրային կարգավորումներն ու պարտավորությունները WTO, CEPA և այլ շրջանակներում,
- Նպաստի աշխատանքի արտադրողականության ու աշխատուժի զբաղվածության բարձրացմանը շուկայում:

Հետազոտությունն իրականացնող խորհրդատուն էլնում է արդյունաբերության բնագավառի բազմամյա ղեկավարման, գերմանա-ավստրիական ճարտարագիտական IIF ընկերությունում աշխատանքային փորձից, ինչպես նաև գործարար հայեցակարգերի ու ծրագրերի բարձրաստիճան իրականացում ունեցող բազմամյա մշակումներից, պարբերական հաղորդակցություններից առաջատար մասնագետների ու գիտնականների հետ, ինչպես նաև ուսումնասիրված համապատասխան պետական ռազմավարությունների և ծրագրերի ու վերը նշված համաձայնագրի դրույթներից:

Բացի վերը նշվածից, նաև իրականացվել է սիստեմատիկ վիճակագրական վերլուծություն, բորսայական ու գնային ցուցանիշների կանխատեսում ու վերլուծություն գիտության ու տեխնոլոգիաների զարգացման տրենդերի վերաբերյալ:

Խորհրդատուն նաև օգտագործել է իր պարբերական մասնակցությունների տեղեկությունները միջազգային մասնագիտական ցուցահանդեսներից, մասնավորապես Գերմանիայից:

Ելնելով հետազոտության նպատակներից, որոնք ձևակերպված են տեխնիկական առաջադրանքում, սույն զեկույցում նպատակահարմար է գտնվել ձևակերպել հետևյալ խնդիրներն ու նպատակները.

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առաջարկել ՀՀ արդյունաբերության զարգացման հիմնարար հայեցակարգ առաջիկա 3-5 տարիների համար և տալ խորհրդատվություն դրա կայունությունն ու արդյունավետությունը ապահովելու համար:

3. ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1 Կառուցվածքահեն ճյուղերի և ենթաճյուղերի ընտրություն և դրանց ներուժի գնահատում:

3.2 Ձևակերպել պետության հնարավոր դերակատարումը, մասնակցության ձևն ու աստիճանը առաջարկվող հայեցակարգի իրականացման համար:

3.3 Տալ առաջարկներ զարգացումը ապահովող մեխանիզմների ստեղծման, բարեփոխման համար, ինչպես նաև ընդունված որոշումների ծրագրերի կառավարման համար, ներառյալ տեղեկատվա-վերլուծական ցանցային լուծումները (թվայնացման խնդիրները):

3.4 Գնահատել SWOT մեթոդով զարգացման հնարավորությունները, հնարավոր ռիսկերն ու դրանց մեղմացման մեխանիզմները:

4. ԻՐԱՎԻՃԱԿՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԲՅԱԼՆԵՐԸ 2023Թ.

ՎԵՐՋՈՒՄ

- Արդիական է ու անհրաժեշտ կառուցել կառուցվածքահեն ճյուղեր, դրա համար առկա է բավարար ներուժ ՀՆԱ –ի մեծացման համար:
- Անհրաժեշտ ճարտարագիտական կադրերի առկայություն, դեռ կա ներուժ դրանց կոորդինացնելու համար:
- Առկա են անհրաժեշտ կապեր միջազգային խորհրդատվական, ճարտարագիտական և նախագծող ընկերությունների հետ:
- Ըստ Խորհրդատուի կարծիքի հանրապետությունում առկա են բավարար ռեսուրսներ դրանց օպտիմալ ու նպատակային օգտագործման համար:
- Բացակայում է հայեցակարգը մշակող ու իրականացնող միասնական լիազորված մարմին: Անհրաժեշտ է մշակել էֆեկտիվ մեխանիզմներ տեխնիկական, կազմակերպա-ֆինանսական կառավարում ապահովելու համար:
- Տարբեր ճյուղեր ներկայացնող մասնագետների հետ քննարկումների ու վերլուծությունների արդյունքում Խորհրդատուն այս հետազոտությունում նպատակահարմար չի համարում ներառել ոսկերչա-հուշանվերների, սննդի, թեթև արդյունաբերության խնդիրները: Համարվում է, որ այս ուղղությունները կարող են զարգանալ մասնավոր ձեռներեցության շրջանակներում:
- Հետազոտության մեջ ներառված չէ նաև մետաղական հանքարդյունաբերության խնդիրները, համարելով, որ այս բնագավառը առանձին լուծումներ է պահանջում սեփական յուրահատկություններով հանդերձ: Այստեղ անհրաժեշտ են պետական ադմինիստրատիվ կառավարման մեխանիզմներ ու մեթոդներ, որոնք նպատակ կունենան ապահովել մետաղական նյութերի ստանդարտների համապատասխանող որակ, ներառելով թափոններում ու խտանյութերում պարունակող տարատեսակ հազվագյուտ մետաղներն, ինչպես նաև բացառելով կոռուպցիոն ռիսկերը:

Համապատասխան SWOT հետազոտությունը ներկայացված է Հավելված 3-ում:

5. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԱՌԱՋԻԿԱ 3-5 ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ինչպես վերը նշված է այսպես կոչված հիմնարար ճյուղերն ընտրված են հետևյալ սկզբունքներից.

- Ներքին ու արտաքին շուկայի ներուժը, ՀՆԱ-ի զգալի ավելացման հնարավորությունը
- Ցածր նյութատարությունը ու հումքային կախվածությունը,
- Բնապահպանական արժեքն ու ռեցիկլինգի ներուժը (հումքի առաջնային ու երկրորդային օգտագործման հնարավորությունը),
- Էներգատարության անհրաժեշտ պահանջները,
- Բավարար կայունությունն ու էֆեկտիվությունը,
- Ժամանակակից տեխնոլոգիական զարգացման մակարդակն ու հեռանկարայնությունը,
- Հարակից ճյուղերի զարգացման խթանումը:

Առաջարկվող ճյուղերը հետևյալն են.

5.1. ՔԻՄԻԱ

- Ազոտա-ամիակային արտադրություն (պարարտանյութեր),
- Ջրածնային տեխնոլոգիաներ- «կանաչ» ջրածին (արդեն իսկ ձևավորվում է որպես առանձին ճյուղ),
- Ֆիզ-քիմիական տեխնոլոգիաներ- ադդիտիվ տեխնոլոգիաներ, նյութեր-բյուրեղներ-փոշիներ (այդ թվում նաև 3D տպիչների համար),
- «Փոքր» քիմիա, ռեակտիվներ, ռեագենտներ կենցաղային քիմիայի համար:

5.2. ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

- Տարատեսակ դեղամիջոցների նախանյութերի արտադրություն արտաքին շուկայի հետ կոոպերացիայի համար (օր.՝ սկսվել են աշխատանքներ հեպարինի արտադրության համար),
- Բնական տեղական էնդեմիկ դեղաբույսերից տարատեսակ հակաբորբոքային, այրվածքային, կոսմետիկ քսուկների, եթերային յուղերի արտադրություն:
-

5.3. ՃՇԳՐԻՏ ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

- Մետաղի մշակման ունիվերսալ մշակում և ձուլում:
- Սարքաշինություն-**տվիչներ**, չափիչ-հսկիչ, ախտորոշիչ սարքեր, լազերային ու ինֆրակարմիր տիրույթի սարքեր, ԱԿՀ և այլն:
- Ռոբոտոտեխնիկա: Փոքր 0,2-0,5-1,0-2 կՎտ հզորության շարժիչներ ու էլեկտրաբանեցնող սարքեր, մեխանիկական շարժական կոնստրուկցիաներ ԱԲ ու ԿՀ:
- Ինտեգրալ հավաքովի արտադրություն մետաղ-իոն-ածխածնային տարրեր կազմվածքի ու կատարման էներգիայի կուտակիչներ 200ՄՎԱ/տարի գումարային հզորությամբ:

5.4. ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ

- Ռադիոլուկացիոն կայաններ ու սարքեր, անտենային համակարգեր:

- Միկրոչիպերի ինտեգրալ հավաքովի արտադրություն:
- Տիեզերական հետազոտությունների սարքեր:

5.5. ՈՉ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՆՑՈՒԹԵՐ

- Պերլիտներ՝ ջերմամեկուսիչներ, լցոնիչներ, թեթև բետոններ, կլանիչներ
- Դիատոմիտներ՝ ֆիլտրներ, աբրազիվներ, լցոնիչներ
- Ցեոլիտներ՝ պարարտանյութի հավելում, գազերի աբսորբենտներ, ջրային ֆիլտրեր, ռադիոնուկլիդների և ծանր մետաղների դեզակտիվացում
- Բենտոնիտներ՝ հանքարդյունաբերություն, կերային հավելումներ, հորատման քսանյութեր
- Քարեր՝ տուֆեր, բազալտներ և այլն., այդ թվում՝ շինարարություն, ջերմամեկուսիչ նյութեր, միներալ թելեր, ամրաններ, թթվակայուն սալիկներ և խողովակներ, կոմպոզիտային նյութեր:

Վերը նշված ճյուղերի արտադրությունը ընդհանուր արդյունաբերական արտադրության ծավալում այսօր կազմում է ընդհանուր 6-8% մոտ 340-350 մլն. ԱՄՆ դոլար: Այս ծավալի մեծ մասը կազմում են ոչ մետաղական հանքանյութերի արտադրությունը/հիմնականում տուֆերը, բազալտները, տարատեսակ խարամներն ու ավազի հանքանյութերը/ մոտ 200մլն. ԱՄՆ դոլար. Այսինքն՝ մնացածի ծավալը չի գերազանցում 3%-ը:

Աղյուսակ 1-ում տրված է թվարկած ճյուղերի արտադրության ծավալների աճի կանխատեսումը, գնահատված է նաև դրանց ներմուծման-արտահանման ներուժը:

Աղյուսակ 1

N	1	2	3	4	5	6	7
	Ճյուղ/ ենթաճյուղ	կանխատեսում արտադրության ծավալ 1-ն փուլ մլն. ԱՄՆ դոլար	առկա վիճակ մլն ԱՄՆ դոլար	Արտահանման ներուժ %	ներմուծում/հումք / %	հնարավոր մատակարար երկիր	նշումներ
1	Քիմիա պարարտանյութեր ռեակտիվներ ռեագենտներ	170-180	25	30	Գազ Է/Է	Իրան ՌԴ	
	Նյութեր բյուրեղներ փոշիներ	10—15	0	90		Չինաստան Ուկրաինա ՌԴ	
2	Դեղագործություն	40-50	20	70		տեղական հումք Հնդկաստան	
3	Ճշգրիտ մեքենաշինություն	60-70	40	20	40	Ուկրաինա ԵՄ, Չինաստան ԵՄ, Չինաստան ԵՄ, Իտալիա	
	մետաղամշակում	70-80	40	80	20		
	սարքաշինություն	10-15	0	30	20		
	ռոբոտոտեխնիկա	25-30	0	20	40		
4	Բաղիո էլեկտրոնիկա համակարգեր	30	8	50	20	ԵՄ Չինաստան Թայվան	
	սարքեր միկրոչիպերի հավաքում	20-25	0	30	60		
5	Ոչ մետաղական հանքանյութեր	400	200				
	ԸՆԴԱՄԵՆԸ	860	340				

Ինչպես և վերը նշված էր կանխատեսումներն ու գնահատականները իրականացվել էլ հիմնվելով բիզնես-պլանների բազմամյա մշակումների, հարցումների, մանրամասն քննարկումների և վերլուծությունների վրա, տարբեր բնագավառների մասնագետների, գործարար շրջանակների ու գիտնականների հետ: Հավելված 2-ում ներկայացված են ՀԿ-ների և մասնագետների/փորձագետների քննարկումների մասնակիցների ցանկը:

Հավելված 4-ում օրինակի կարգով ներկայացված է աղդիտիվ տեխնոլոգիաների բիզնես-պլանը, որն հաջողությամբ պաշտպանվել է ՀՀ Ազգային Ակադեմիայում (ԱԱ) և Գիտության Կոմիտեում (ԳԿ):

Աղյուսակ 1-ում ներկայացվածից երևում է, որ արտադրության ծավալը նշված ճյուղերում աճում է մոտ 2.5 անգամ հասնելով 500 մլն. ԱՄՆ դոլար/տարի: Արտադրության ընդհանուր ծավալում աճը կկազմի 10-12%, այդ թվում որոշ ենթաճյուղեր կլինեն նորաստեղծ: Դրանց զարգացումը կհանգեցնի շոշափելի աճի հարակից բնագավառներում: Մասնավորապես 5.5 կետում թվարկած ոչ մետաղական հանքաարդյունաբերությունում արդյունահանմանը զուգահեռ նախատեսվում է կազմակերպել ջերմամեկուսիչ, ֆիլտրացնող, **քսայուղող**-փայլեցնող նյութերի արտադրություններ, ինչպես նաև կերակրի հավելումներ ագրո-արդյունաբերության համալիրում:

Հատուկ նպատակահարմար է նշել, որ Հայաստանը ժամանակին ուներ բավականին հարուստ փորձ տիեզերական սարքաշինության մասով նախկին ԽՍՀՄ ծրագրերի շրջանակում, սակայն այստեղ նկատի ունենք ստեղծել նոր ճյուղ, որն կհամագործակցի ԵՄ հետ եվրոպական ծրագրերի ներքո: Այսօր արդեն իսկ սկսել են աշխատանքներ ավստրիական աերոկոսմոսիկական գործակալության հետ, որոշ այլ եվրոպական ընկերությունների հետ, մշակվում են ուղիներ այդ համագործակցությունը խորացնելու ու զարգացնելու համար:

Վերը նշված ծավալներն ապահովելու համար հավելյալ էներգետիկ հզորությունների պահանջարկը գնահատվել է.

- Էլեկտրաէներգիայի մասով մոտ 40 ՄՎտ
- գազի մասով մոտ 300մլն . խմ/տ

որից մոտ 75-80% քիմիայի պահանջն է:

Այսքանով հանդերձ անհրաժեշտ է արձանագրել, որ մեկ միավոր արտադրանքի հաշվարկով էներգիայի ու հումքի տեսակարար ցուցանիշը մոտ 2 անգամ գերազանցում է եվրոպական ցուցանիշները: Ուստի և կոնկրետ ծրագրեր իրականացնելիս պետք է նկատի ունենալ մեխանիզմներ ու միջոցառումներ էներգա և նյութախնայողության գործոնը, նյութեր տարատեսակ ռեցիկլինգի հնարավորությունը, վերականգնվող էներգիայի աղբյուրներ լայն տարածումը (մինչև 25-30%), ինչպես նաև աշխատանքի արտադրողականության բարձրացումը:

Հավելված 5-ում ներկայացված են ռիսկերի գնահատականը, առաջարկները դրանց մեղմելու համար:

Հավելված 6-ում ներկայացված են ԵՄ-ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՒ հղումները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Պետության դերը

Իրավիճակի գնահատականը ցույց է տալիս, որ մասնավոր սեկտորը ցանկություն չունի վերը նշված ուղղություններում ներդրումներ կատարել, գնահատելով ռիսկայնությունը բարձր (որոշ դեպքերում անհաղթահարելի), թեև ընդունում է դրանց արդիականությունը:

Բացառությունը «դեղագործությունն է», ուր արդեն իսկ կան պոտենցիալ ներդրողներ, մշակվում են բիզնես-պլաններ, կատարվում են նախնական նախագծային աշխատանքներ ԵՄ ստանդարտներին համապատասխան: Այստեղ անհրաժեշտություն կա պետության աջակցությունը միջազգային սերտիֆիկացման մասով: Նկատի ունենք կազմակերպական, ադմինիստրատիվ ու ֆինանսական աջակցությունը, գերադասելի դրամաշնորհների, ինչն անխոս կնպաստի ռիսկերի նվազմանը, պետության նկատմամբ վստահության ու դերի բարձրացմանը:

Հետաքրքիր է իրավիճակը աերոտիեզերական հետազոտությունների բնագավառում: Մասնավոր ներդրողը հիմնադրել է ակտիվներ, ստեղծել է «Հայկական աերոտեզերական գործակալություն», ստացել է համագործակցության առաջարկ ավստրիական նմանատիպ գործակալության հետ համատեղ Մարսի հետազոտման ծրագրի շրջանակներում: Գտնվել են ներդրողներ շահագրգռված ներդրումներ կատարել բաժնետիրական կապիտալում: Պետության մասնակցությունը այս աշխատանքներում նպատակահարմար է, պարտադիր չէ ֆինանսական ռեսուրսներով: Սակայն պետությունը, ի դեմս լիազորված մարմնի, հրաժարվում է համագործակցել վերը նշված ընկերության հետ, պնդելով որ այս ոլորտը պետական մենաշնորհ է, հարցը մղելով «բյուրոկրատական փակուղի, չունենալով սեփական հայեցակարգը: Մա մեկ վառ օրինակ է կոմպետենտության բացակայության, բարեփոխումների խոչընդոտման, գիտելիքի իսպառ բացակայության նմանատիպ կառույցների գործելակերպի վերաբերյալ զարգացած երկրներում: Այս հարցը պահանջում է անհապաղ ադմինիստրատիվ լուծում, մասնավաճ որ որևէ ֆինանսական պարտավորության կարիք չկա:

Վերադառնալով վերը նշված ճյուղերին (քիմիա, ճշգրիտ մեքենաշինություն, ռադիո-էլեկտրոնիկա, ոչ մետաղական հանքանյութեր) ապա այս բնագավառներում պետության դերն որոշիչ է: Պետությունը պետք է ֆինանսավորի սկզբնական փուլում բիզնես պլանները, նախագծա-հետազոտական աշխատանքները, հիմնադրի բաժնետիրական ընկերություններ, նկատի ունենալով հետագայում դրանց արժեթղթերը հանել բորսաներում ազատ վաճառքի: Այս ոչ պարզ լուծմանն է հանգեցրել անցյալի «ծանր» ժառանգության փորձը գործարար միջավայրում և ՀՀ արդյունաբերության արդի վիճակը:

Խորհրդատուի կարծիքով այլընտրանք այս առաջարկին այսօր չկա, խնդիրների լուծումը կարող է արգելափակվել ևս մի քանի տարի:

Այս հայեցակարգի ընդունման պարագայում հարկ կլինի սկսել ձևավորել անհրաժեշտ մեխանիզմներ իրականացնելու համար: Հիմնական մեխանիզմը համարվում է լիազորված միասնական պետական մարմնի ձևավորումը, որի ներքո կստեղծվեն հատուկ կառույցներ, որոնք օժտված կլինեն դասական եվրոպական մենեջմենթի ֆունկցիաներով: Նպատակահարմար է այդ մարմինը լինի Էկոնոմիկայի նախարարությունը:

Ներդրումների ընդհանուր ծավալը գնահատվում է մոտ 350 մլն. ԱՄՆ դոլար. 3-4 տարվա համար, որից

- 150 մլն. ԱՄՆ դոլար՝ քիմիայի բնագավառում,
- 100 մլն. ԱՄՆ դոլար՝ ճշգրիտ մեքենաշինության համար:
- 50-70 մլն. ԱՄՆ դոլար՝ ոչ մետաղական հանքանյութերի մշակման բնագավառում:

Քիմիայի ներդրման գնահատականը իրականացվել է ամերիկյան հայտնի KBR (Kellog Brown & Root Inc.) ճարտարագիտա-խորհրդատվական ընկերության կողմից, իսկ մեքենաշինության մասով հիմնվել ենք մի շարք իտալական, ավստրիական ընկերությունների հետ, մասնավորապես իտալական FAAM՝ էներգիայի կուտակիչների ընկերության: Կարևոր է նշել, որ առաջարկվող բիզնես-մոդելները չեն ենթադրում ուղիղ հարկային արտոնություններ և նախապատվություններ: Խնդիրներն ու հնարավոր կանոնակարգերը քիմ. պարարտանյութերի օգտագործման համար ագրո-արդյունաբերական համալիրում պետությունը կարգավորում է ինքնուրույն: Այսօրվա գործող խթանող մեխանիզմներն անարդյունավետ են:

Խորհրդատուն տեղեկացված է տնտեսության թվայնացման ընթացքին Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում (FSUՆ), այն ճյուղերում համարում է ոչ անհաջող և չի բացառում կոռպորացիայի հնարավորությունը նշված բնագավառներում ՊՄՀ շրջանակներում: Հարկ է նշել, որ ՀՀ-ում ընդունված է օրենք ՊՄՀ մասին, սակայն նորմատիվային կարգավորումների բացակայությունը, մասնավորապես իրավասությունների, ռիսկերի ու պատասխանատվության բաժանման, համագործակցության ֆորմատի կարգավորման մասով, այս օրենքը դարձնում է ոչ կիրառական: Անհրաժեշտ այս խնդիրները կարգավորել 2024թ. ընթացքում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խորհրդատուն սեփական փորձի, բազմակողմանի խորհրդակցությունների և ընթացիկ վերլուծությունների հիման վրա հետազոտության հիմքում դրել է հետևյալ չափորոշիչը՝ համապատասխանացնել ՀՀ արդյունաբերության զարգացումը ԵՄ ստանդարտներին, ռեզլամենտներին և դրույթներին:
2. Առաջարկվել է առաջիկա 3-5 տարիների արդյունաբերության զարգացման հայեցակարգային տեսակետ: Տրվել են կառուցվածքային առաջարկներ, գնահատվել է մոտ 500 մլն. ԱՄՆ դոլար/տարի աճի ներուժ, ինչպես նաև գնահատվել է անհրաժեշտ ներդրումների ծավալը մոտ 350 մլն. ԱՄՆ դոլար:
3. Տրվել է արտադրական, էներգատարողության և հանքային բազայի արտահանման ներուժի աճի առնվազն 50%:
4. Գնահատվել են առավելություններն և բացերը SWOT մեթոդաբանությամբ, ձևակերպված են հնարավոր ռիսկերն ու դրանց մեղմացման մեխանիզմները:
5. Առաջարկվել է պետության մասնակցության մոդելը: Տրվել են առաջարկներ օպտիմալ իրականացման մեխանիզմների վերաբերյալ, ձևակերպված են հիմնական պահանջները կոնկրետ ծրագրերի մշակման և դրանց իրականացման համար ժամանակակից պայմաններում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

N	1	2	3	4	5	6	7
	Ճյուղ/ Էնթաճյուղ	Կանխատեսում արտադրության ծավալ 1-ն փուլ մլն. ԱՄՆ դոլար	Առկա վիճակ մլն ԱՄՆ դոլար	Արտահանման ներուժ %	Ներմուծում/ հումք (%)	Հնարավոր մատակարար երկիր	Նշումներ
1	Քիմիա պարարտանյութեր ռեակտիվներ ռեագենտներ	170-180	25	30	Գազ Է/Է 	Իրան ՌԴ	
	Նյութեր բյուրեղներ փոշիներ	10—15	0	90		Չինաստան Ռկրախնա ՌԴ	
2	Դեղագործություն	40-50	20	70		տեղական հումք Հնդկաստան	
3	Ճշգրիտ մեքենաշինություն	60-70	40	20	40	Ռկրախնա ԵՄ, Չինաստան ԵՄ, Չինաստան ԵՄ, Իտալիա	
	մետաղամշակում	70-80	40	80	20		
	սարքաշինություն	10—15	0	30	20		
	ռոբոտոտեխնիկա	25-30	0	20	40		
4	Էներգիա						
	Բաղիո էլեկտրոնիկա համակարգեր սարքեր միկրոչիպերի հավաքում	30 20-25	8 0	50 30	20 60	ԵՄ Չինաստան Թայվան	
5	Ոչմետաղական հանքանյութեր	400	200				
	ԸՆԴԱՄԵՆԸ	860	340				

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻՆ ՈՒ ԽՈՐԱՑՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Մ. Մարկոսյան – տ.գ.դ., պրոֆեսոր

Հ. Բաբայան — տ.գ.դ. ,պրոֆեսոր

Ա. Գևորգյան – ֆ/մ. գ. դ. ,պրոֆեսոր

Ա. Պետրոսյան –ք.գ.թ.

Կ. Գրիգորյան - ք.գ.թ.

Պ. Ոսկանյան - տ.գ.թ.

Ն. Խաչատրյան - տ.գ.թ.

Ա. Զաքարյան

Ա. Հակոբյան

Գ. Ներսիսյան –պրոֆեսոր

Ա. Կիրակոսյան

Մ. Մեհրաբյան

Հասարակական կազմակերպություններ

«Հայաստանի գործատուների հանրապետական միություն»

«ՀՀ տեղական արտադրողների միություն»

ԲՏԱ նախարարին կից «Հասարակական տեխնիկական հանձնաժողով»

Էկոնոմիկայի նախարարությանը կից փորձագիտական խորհրդի անդամներ

SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

- Ճարտարագիտա-տեխնիկական կադրերի առկայություն նրանց կոորդինացման ու վերապատրաստման հնարավորություն
- միջազգային ճարտարագիտական ու
- արտադրական ընկերությունների հետ կապեր և համագործակցության հնարավորություն
- սեփական հումքային բազայի օգտագործում
- ներմուծման շոշափելի փոխարինում
- Որոշակի փորձառություն էներգախնայողության ու վերականգնվող էներգետիկայի բնագավառում
- Բավարար ռեսուրսների առկայություն Հայաստանում նպատակային օգտագործելու համար, այդ թվում ՊՄՀ շրջանակներում
- Կոռուպցիոն մեխանիզմների կիրառման ցածր ներուժ ու մակարդակ
- Բավարար ներուժ եղած արդյունաբերության բազային ճյուղերի աճի 2-3 անգամ (քիմիայի պարագայում նույնիսկ 10 անգամ)
- Արտահանման աճի ներուժ

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

- Միասնական ինտեգրված հայեցակարգի բացակայություն
- Միասնական համակարգողի ֆունկցիա կատարող պետական մարմնի բացակայություն, առանձին մարմինների անգործունակություն
- Բացակայում են բավարար կառավարման տեխնիկական, կազմակերպական-ֆինանսական մեխանիզմներն ընդունված որոշումներն իրականացնելու համար, ինչը հանգեցնում է ֆինանսա-վարկային ռեսուրսների անհասանելիության
- մասնավոր սեկտորի պոտենցիալ ներդրումների ցածր ակտիվություն
- Ուղղահայաց ու հորիզոնական կոոպերացիայի ցածր մակարդակ
- Տեղական հումքային բազայի հնարավորությունների ցածր օգտագործման գործակից
- Մենաշնորհային ենթակառուցվածքային կորպորացիաների (հանրային ծառայություններ տրամադրող) «ներփակվածությունը», մասնավորապես՝ ՀԷՑ, ԳԱԶՊԸՆՄ-Արմենիա, Վեոլիա Ջուր և այլն
- Լոգիստիկ խնդիրներ
- Միջին- տեխնիկական կադրերի բացակայություն

ՀԱՎԵԼՎԱԾ 4 ներկայացված է առանձին փաթեթով

ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՌԻՍԿ	ՏԵՄԱԿ	ԱԶԴԵՑՈՒ- ԹՅՈՒՆ	ՀԱՎԱՆԱԿԱ- ՆՈՒԹՅՈՒՆ	ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ				
քաղաքական ֆորս- մաժոր, էներգետիկ և լոգիստիկ խնդիրներ	Քաղաքական	Բարձր	Ցածր	Ծրագրերի ու մեխանիզմների մշակում լուծումների ընտրություն
Պետ. մարմինների կոմպետենտության աստիճան	Քաղաքական	Միջին	Ցածր	Փորձառու մասնագետներից բաղկացած պետմարմնի, խորհրդի ձևավորում
Սանկցիոն սահմանափակումներ պայմանավորված ԵԱՏՄ անդամակցությամբ	Քաղաքական	Միջին	Ցածր	Միջազգային սանկցիոն կարգավորումների խիստ պահպանում
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՎԱԿԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ				
Շուկայի գնային հնարավոր տատանումներ, որոնք կազդեն արդյունավետության և կայունության վրա	Շուկա	Միջին	Միջին	Կողմնորոշում դեպի տեղական շուկա/30-50% կախված ճյուղից/, տեղեկատվական աջակցություն, հակաճգնաժամային կառավարման մեխանիզմների կիրառում
Հնարավոր ներդրողների կողմից, սկզբնական փուլերում, ցանկության բացակայություն ծրագրերի մասնակցելուն	Գործարարու- թյուն	Բարձր	Բարձր	Թվային -տեղեկատվական համակարգի ձևավորման ընթացքին հետևելու ու կառավարելու համար: Պետական երաշխիքների, այլ պետ. մեխանիզմների կիրառություն ՊՄՀ շրջանակներում, բորսայական մեխանիզմների կիրառություն
Միջին և ցածր մասնագիտական մակարդակի կադրերի, բանվորների սակավություն	Մարդկային	Բարձր	Ցածր	Ուսումնարանների և քոլեջների, այլ մասնագիտական կրթական կազմակերպությունների կազմակերպում
Ստանդարտացում և սերտիֆիկացիա	Շուկա	Բարձր	Բարձր	Խթանում և պետական աջակցություն/էկոնոմիկայի նախարարություն
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ				
Ֆինանսական, դրամա-վարկային ճգնաժամ	Ֆին.	Բարձր	Միջին	Կանխատեսում և արագ արձագանքում հնարավոր կորուստները նվազեցնելու նպատակով
Արտարժույթային ռիսկեր	Ֆին.	Բարձր	Միջին	Հատուկ հեջավորում և մեխանիզմների մշակում
Բյուջե-բանկ-արտադրություն կապերի խաթարում	Ֆին.	Բարձր	Միջին	Հայեցակարգերի ու ծրագրերի ընթացիկ մոնիթորինգ, վերլուծություն, հսկողություն լիազորված մարմինների կողմից

**ԵՄ-ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ
ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՄԱՍ IV

Տնտեսական համագործակցությունը;

Տրանսպորտը Հոդված 36; Շրջակա միջավայրը Հոդված 45;

ԳԼՈՒԽ 5

Արդյունաբերական և ձեռնարկատիրական քաղաքականությունը;

ԳԼՈՒԽ 12

Հանքարդյունաբերությունը

ՄԱՍ VI

Առևտուր և առևտրին առնչվող հարցերը

Առևտրի տեխնիկական խոչընդոտները

Հոդված 127